ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10.07.2020
Ք. Իջևան

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանի հաշվետվությունը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները (Հաշվետվությունները կցվում են՝ **Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 5**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ամբիոններում իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց 2019-2020 ուստարվա ընթացքում Հումանիտար գիտությունների ֆակուլտետում իրականացված աշխատանքները (Հաշվետվությունը կցվում է՝ **Հավելված 6**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում դեկանի իրականացրած աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ երկու հարց՝

ա) Ֆակուլտետի ուսումնական պլանի հաստատում,

բ) Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2019-2020 թթ. անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման հարցը:

Ընթացիկ առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը հայտնեց, որ Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմվել և ներկայացվել են 2020-21 ուստարվա ուսումնական պլանները՝ ըստ կրթական ծրագրերի: Ըստ կիսամյակների ճշտվել են առարկաները՝ համապատասխան ժամաքանակներով:

Ընթացիկ երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի հինգ ամբիոններում քննարկվել է դասախոսների՝ 2020-2021 ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը:

Անհատական բեռնվածության հիմքում դրվել է գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Ա. Այդինյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները հայտնեցին, որ ուսումնական պլանները և անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն ու հանգամանալից քննարկումներից հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) 2020-2021 ուստարվա ուսումնական պլանները ընդունել ի գիտություն:

բ) Մասնագիտական ամբիոնների 2020-2021 թթ. անհատական ծանրա-բեռնվածության հարցը ընդունել ի գիտություն:

Ըստ այդմ՝ դասախոսներին հանձնարարել նոր ուսումնական տարվա համար կազմել անհատական զարգացման և աշխատանքային պլանները, մինչև օգոստոսի վերջը նախապատրաստել և ամբիոն ներկայացնել դասընթացների փաթեթները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր մասնագիտություններին՝ մի շարք դասընթացներով «Հայոց պատմության հիմնահարցեր», «Փիլիսոփայության հիմունքներ», «Իրավունքի հիմունքներ», «Տրամաբանություն», «Քաղաքագիտություն», «Ազգագրության հիմունքներ», «Հայ ազգագրություն», «Կրոնագիտության հիմունքներ», «Բարոյագիտության հիմունքներ»:

Ամբիոնի դասախոսական կազմում ընդգրկված քսաներեք դասախոսներից երկուսը պատմական գիտությունների դոկտոր է, ինը՝ պատմական գիտությունների թեկնածու, յոթը՝ նաև դոցենտ, մեկը՝ քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, երկուսը՝ ասիստենտ, ինը՝ դասախոս:

2019թ. սեպտեմբերի ամսին ամբիոնի կողմից՝ համաձայն ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի, կազմվել և հաստատվել է ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

Հաշվետու 2019-2020 ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնագիտական, այնպես էլ ուսումնակազմակերպչական աշխատանքներ:

Կազմվել է ամբիոնային ծանրաբեռնվածությունը, կատարվել են դասաժամերի բաշխում, հաստատվել են դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունները: Ճշգրտվել են համատեղությամբ աշխատող դասախոսների աշխատանքային գրաֆիկները:

Կազմակերպվել և իրականացվել են 2018-19 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարումը:

Տարեսկզբին վերանայվել և սահմանված կարգով հաստատվել են «Պատմություն» մասնագիտության եզրափակիչ, առանց եզրափակիչ, առանց ընթացիկ գնահատմամբ քննությունների և ստուգարքների հարցաշարերը և ժամանակին տրամադրվել ուսանողներին: Կազմվել և վերանայվել են առարկայական բոլոր ծրագրերը,

պորտֆոլիոները՝ որակի ապահովման չափանիշներին ու ուսումնական պլաններին համապատասխան: Առաջին կուրսեցիների համար պատրաստվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և տեղադրվել Մասնաճյուղի կայք-էջում:

Սահմանված կարգով հավաքագրվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, քննարկվել, հաստատվել են ու տրամադրվել ուսանողներին: Մայիս-հունիս ամիսներին նախատեսվել է «Պատմություն» մասնագիտության ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ուսանողների ավարտական և կուրսային աշխատանքների պաշտպանությունը:

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում նախատեսված են եղել առկա և հեռակա ուսուցմամբ 3-ական պրակտիկաներ, որից իրականացվել է ուսումնականը (Իջևանի պատմաերկրագիտական թանգարան, ՀՀ Ազգային արխիվի Տավուշի մարզային մասնաճյուղում, Իջևանի Սուրբ Ներսես Շնորհալի և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցիներ, Դիլիջանի երկրագիտական թանգարան, Դիլիջանի Հ. Շարաբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարան, Գոշավանք և Հաղարծին եկեղեցական համալիրներ, ղեկ.՝ Ն. Ճաղարյան, հեռակ ուսուցում՝ Ն. Մարգարյան), արտադրականը (պրակտիկան անց է կացվել առցանց համակարգով «Zoom» հարթակում՝ չորս շաբաթ տևողությամբ՝ ազգագրությունից, ղեկ.՝ Ա. Մկրտումյան, հեռակ ուսուցում՝ Ն. Մարգարյան) և արտադրա-մանկավարժականը (պրակտիկան անց է կացվել առցանց համակարգով «Zoom» հարթակում՝ հեռավար ուսուցման ձևով՝ հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցներում, ղեկ.՝ Ա. Ազատյան, հեռակ ուսուցում՝ Ն. Մարգարյան) իրականացվել են հաջողությամբ: Մյուս պրակտիկաները ընթացքի մեջ են:

2019-2020թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում ունեցել ենք հետևյալն պատկերը. «Պատմություն» մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 88,89%, II կուրսի առաջադիմությունը՝ 100%, III կուրսի առաջադիմությունը՝ 62,50%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 72,73%: Եթե փորձենք պատկերը ներկայացնենք նաև որակական առումով, ապա կստացվի հետևյալն, որ «Պատմություն» մասնագիտության I կուրսի կրթական որակը կազմում է 88,9%, II կուրսինը՝ 50%, III կուրսինը՝ 50%, իսկ IV կուրսինը՝ 27%:

Երկրորդ կիսամյակի քննաշրջանը ընթացքի մեջ է:

Ապրիլ-մայիս ամիսներին վերանայվել է 2020-2024թթ. ուսումնական պլանը, համաձայն որի պետք է կազմվի է նաև 2020-2021 ուսումնական աշխատանքային պլանը, ամբիոնային ծանրաբեռնվածությունը:

Վերանայվել է 2019թ. Պատմություն մասնագիտության կրթական ծրագիրը, որը անցել է փորձաքննություն, կազմվել է նաև 2020թ. ծրագիրը:

Կազմվել է նաև կրեդիտային համակարգով ուսումնառության նոր ուղեցույցը:

Վերապատրաստումներ

Համաձայն ԵՊՀ ԻՄ ՌԾ-ի 1.2.1 խնդրի և ամբիոնի 2018-19 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝ ամբիոնի մի շարք աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են ինչպես մասնաճյուղի կողմից կազմակերպվող, այնպես էլ մասնաճյուղից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին, աշխատաժողովներին՝ և՛ որպես ունկդիր և՛ որպես դասավանդող:

Կրկին համաձայն 1.2.1. կետի ամբիոնում պարբերաբար անց են կացվել դասալսումներ՝ ինչպես ամբիոնի վարիչ, Կրթական ծրագրի պատասխանատուի կողմից, այնպես էլ կատարվել են փոխադարձ դասալսումներ՝ դասախոսների կողմից:

2019թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ամբիոնի աշխատակիցները մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլով նախատեսված **«Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում»» վերապատրաստման դասընթացին, որը վարել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը:**

2020թ. հունվարի 29-31-ն ընկած ժամանակահատվածում ամբիոնի աշխատակիցները մասնակցել են «Համակցված դասավանդում և ուսուցում» 12 ժամ տևողությամբ դասախոսների վերապատրաստման դասընթացին, որը վարել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ, քիմ. գիտ. թեկնածու Լիանա Գաբրիելյանը:

2020թ. մայիսին ԵՊՀ ԻՄ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից կազմակերպած «Ինչպե՞ս օգտագործել Google forms ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար» վերապատրաստման հեռավար դասընթացին, որը վարել է ՄԿՈԱ բաժնի վարիչ, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մարիետա Ճաղարյանը:

2019թ. դեկտեմբերի 5-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կայացավ Պատմաբանի օրվան նվիրված միջոցառում, որը կազմակերպել էին «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները:

Գիտական գործունեություն

Ընթացիկ ուստարում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Մի շարք հոդվածներով և զեկուցումներով (այդ թվում նաև մենագրություն, դասագիրք) հանդես են եկել պ.գ.թ., դոցենտ Դավիթ Թինոյանը / Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը Հեթում Բ-ի գահակալության առաջին շրջանում, Պատմություն եւ մշակույթ, 2019, էջ 38-42 /, քաղ.գ.թ., դոցենտ Հովսեփ Մովսեսյանը / THE PROBLEM OF MOTIVATION FOR POLITICAL LEADERS, NORWEGIAN JOURNAL OF DEVELOPMENT OF THE INTERNATIONAL SCIENCE, 2019, N 34, Norway, 50-53 pp /. Քաղաքական իշխանության լեգիտիմության արժեքային բազմաչափությունը, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, հոկտեմբեր 08-09, Երևան, 2019, էջ 308-314: Личность политического лидера, ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНЫХ И ФЕДЕРАТИВНЫХ ОТНОШЕНИЙ, 2019, N 11/56, Москва, стр. 1930-1936. Личность политика в контексте профессиональной деятельности, ВОПРОСЫ ПОЛИТОЛОГИИ, 2019, N 11/51, Москва, стр. 2365-2371/, պ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյան / Վահան Ա Սյունեցի կաթողիկոս հայոց, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2019, թիվ 2/29, էջ 38-54, դասախոս Ա. Գրիգորյան / Նորահայտ վիմագրեր Սոթքի տարածաշրջանից, Սեդրակ

Բարխուդարյան-120 գիտական հոդվածների ժողովածու, 2019, էջ 56-64: Սոթք-1 ամորցը և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի սոթքյան հատվածը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, 2019, էջ 117-124/:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնն ունի 26 աշխատակից, այդ թվում՝

- Վեց գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- մեկ դոցենտ,
- տասնչորս գիտությունների թեկնածու, որից 10-ը դոցենտ, 4-ը ասիստենտ,
- երկու ասիստենտ,
- երկու դասախոս,
- մեկ ավագ լաբորանտ:

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Հաշվետու 2019-2020թթ. ուստարվա ժամանակահատվածում ամբիոնում ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը:

Ընդհանուր մանկավարժություն մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել են պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների պաշտպանությունն իրականացվել է Զում տեսակապի միջոցով: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցած առկա ուսուցման համակարգում 38 շրջանավարտներից 7-ը ստացել են «գերազանց», 26-ը՝ լավ, 5-ը՝ բավարար: Անբավարար գնահատական չի գրանցվել:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սողոյանը ներկայացրել է իր առաջարկությունները և դիտողությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից: Ամբիոնի կողմից նախատեսված

մանկավարժական և արտադրական պրակտիկաները հաջողությամբ իրականացվել են:

2019-2020ուստարվա 2-րդ կիսամյակի քննություններն ընթանում են համաձայն ընդունված ժամանակացույցի՝ Զում տեսակապի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՕՏԱՐ ԼԵԶՎՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԾ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ) բոլոր առարկայական դասընթացների համար:	Ամբիոնում առկա են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ) բոլոր առարկայական դասընթացների համար:		
Վերապատրաս-տել դասա-խոսական կազմը	Ավելացնել դասախոսական կազմի գիտական, մեթոդական մանկավարժական հմտությունները	Դասախոսները մասնակցել են ԵՊՀ հետբուհական կրթության բաժնի, Հայաստանում Բրիտանական Խորհրդի, կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:		
Ավելացնել հրատարակվող հոդվածների թիվը գիտական ամսագրերում	Խթանել դասախոսական կազմի գիտական գործունեությունը	Լույս են տեսել ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած 7 գիտական հոդված(որոնցից 5-ը մասնաճյուղի		

		շրջանավարտների հետ համատեղ):		
Լայնորեն կիրառել ժամանակակից տեխնոլոգիանեը դասապրոցեսում, այդ թվում համակարգչային լսարան, համացանց, ինտերակտիվ մեթոդներ:	Ավելացնել ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում գրագիտությունը	Ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունքում ներկայացվել են ինքնուրույն PPT զեկուցումներ և ռեֆերատներ:		
Մասնացել միջազգային, հանրապետական, ներբուհական գիտաժողովներ և գիտական սեմինարներ:	Խթանել դասախոսական կազմի գիտական գործունեությունը	Ամբիոնի դասախոսները մասնակցել են 2019 թվականի սեպտեմբերին ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի և անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված ԵՊՀ հարուրամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:		
Կազմակերպել միջազգային, հանրապետական, ներբուհական		Մայիսի 15-ին ամբիոնի վարիչի կողմից իրականացվել է առցանց գիտական սեմինար	Չի կազմակերպվել միջազգային գիտաժողով, ֆինանսական միջոցների	Գտնել անհրաժեշտ ֆինանսավորում բուհի կամ բարեգործական ընկերություններ

գիտաժողովներ և գիտական սեմինարներ:		"Ethnopsycholinguistics as a new discipline" թեմայով:	բացակայության պատճառով:	ի աջակցությամբ:
Կազմակերպել միջոցառումներ ուսանողների մասնակցությամբ	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը բուհական կյանքին	«Օտար լեզուներ » մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, այդ թվում ՝ “Ուսուցչի տոն”, “Անգլերենը որպես միջազգային լեզու” խաղ – դատավարություն, «Ամանորյա միջոցառում», «Իմ սիրելի գրողը» (առցանց), իրականացվել են մի շարք բաց դասեր և այլն:		
Խրախուսել ուսանողների մասնակցությունը մրցույթների և աշխատաժողովների	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը գիտական և կրթական ծրագրերի	«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցել են “Write On! Competition 2020” էսսեների միջազգային մրցույթին, որը կազմակերպել էր ԱՄՆ խաղաղության կորպուսը, և մի քանի ուսանողներ		

		զբաղեցրել են առաջին տեղեր:		
Կազմակերպել ակումբներ ուսանողների համար	Ավելացնել ուսանողների ներգրավվածությունը բուհի գիտական և կրթական կյանքում:	Ամբիոնի կողմից կազմակերպված “Գրքասեր” ակումբի հանդիպումների ընթացքում պետք է քննարկման ներկայացված լինեին անգլալեզու գրողների հետաքրքիր աշխատանքներ:	Չի իրականացվել համաճարակի պատճառով:	Իրականացնել գալիք ուսումնական տարում, նույնիսկ առցանց:
Ստանալ միջազգային դրամաշնորհային ծրագրերին:	Ընդլայնել գիտական և մանկավարժական գործունեությունը		Չի իրականացվել, քանի որ ունի շարունակական բնույթ և օտար լեզուների բանասիրության ոլորտում դրամաշնորհների թիվը խիստ սահմանափակ է:	Շարունակել դիմումները համապատասխան մարմիններին:
Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին:	Նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:		Դեռևս չի իրականացվել, քանի որ ունի շարունակական բնույթ:	

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 2019-20 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/միջոցառում/ծրագիր	ՌԾ-ի նպատակի համարը, խնդրի համարը Ժամկետը	Համագործակցող ստարաբաժանում	Ակնկալվող արդյունքներ	Ինչ արդյունքներ են ձեռք բերվել	Ինչ չի իրականացվել և ինչու	Ինչպես եք պլանավորել իրականացնել և ինչ ժամկետներում
Վերանայվել և վերամշակվել են «Ֆրանսերեն լեզու և գրականություն» բաժնի կրթական գործող ծրագրերը որոնք միտված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելության իրագործմանը: Հստակեցվել են ծրագրի նպատակները, կրթական վերջնարդյունքները, շրջանավարտների կարիերայի հետագա հնարավորությունները: Դասախոսները, ուսանողները, շրջանավարտները, գործատուները ակտիվ մասնակցություն են ունեցել նոր ծրագրի հայտի	**ՌԾ 1.1.3** 10.2019-07.2020թ.	Ուսումնամեթոդական վարչության ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ Ծրագրերի պատասխանատուներ	Ունենալ §բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանեցված բակալավրի կրթական ծրագրեր			

մշակման աշխատանքնե րին:						
Թարմացվել և վերամշակվել են պրակտիկայի անցկացմանն ուղղված ծրագրերը:	**ՌԾ 1.1.5** 09-2019-09.2020թ.	Ուսումնամեթոդ ական վարչության ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ	Ունենալ ավելի արդյունավետ մեխանիզմներ պրակտիկայի ընթացքը հսկելու համար	Ընտրված են պրակտիկայ ի անցկացման առավել արդյունավե տ ձևեր Քայլեր անել, համաձայնա գրի շրջանակներ ում ուսանողներ ի պրակտիկա ն կազմակերպ ել Ֆրանսիայի Վալանս քաղաքի Մաեստրիս համալսարա նում	Հասնել այն բանին, որ ուսանողն երը պրակտի կան անցկացն են միևնույն դպրոցում ամենալա վ մասնագե տների մոտ	10.12.2019թ.
Հաշվի առնելով արդյունավետ և ձևավորող գնահատման կարևորությու նը, մշակվել են ստուգման և գնահատման նոր ձևեր, որոնք շեշտը դնում են ուսանողի տրամաբանու թյան վրա	**ՌԾ 1.2.3** 10.2019-07.2020թ.	ՈՒՄ ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ	Գնահատման արդյունավետու թյունը բարձրացնելու համար թեստերի ձևերը դարձվել են ավելի բազմազան, ավելի շատացնել տարբերակները	Բոլոր կուրսերում նկատելի է գնահատակ անների համամասնո ւթյուն		
Իրականացնել փաթեթների (պորտֆոլիոն երի)	**ՌԾ 1.2.5** 01.09.2019 -12.2020թ.	Տնօրեն Ուսումնամեթոդ ական վարչության	Դասընթացների համալրված փաթեթներ	Բոլոր գործնական և տեսական փաթեթների		Մինչև 20.02.2019 թ. ներկայացնել 2-րդ

կիրառումը		ՄԿՈԱ բաժին ֆակուլտետներ Ամբիոններ		համալրում		կիսամյակում դասավանդվող առարկաների պորտֆոլիոն երը
Կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների վերանայում և թարմացում	**ՌԾ 1.2.6** 01.10.2019 -2020թ.թ.	Ուսումնամեթոդական վարչության ֆակուլտետներ Ամբիոններ ՄԿՈԱ բաժին	Խորհրդատվությունների իրականացում, ինքնուրույն և արդիական աշխատանքներ	Աշխատանքները ընթացքի մեջ են	Կուրսային աշխատանքների ճիշտ բաշխումը ըստ կիսամյակների	Խորհրդատվությունների իրականացում
Կազմակերպել գիտական կոնֆերանսներ լեզվաբանական խնդիրների մասին	**ՌԾ 2.1.3**	Ֆակուլտետներ Ամբիոններ ՈՒԳԸ	Հետազոտական ունակությունների զարգացում	Ուսանողների կարողությունների և հմտությունների զարգացում	Գիտական վերլուծական մտածողություն	Գիտաժողով՝ նվիրված դասավանդման ժամանակակից մեթոդներին
Ֆրանսերեն լեզվով հրատարակվող հոդվածներ հանրապետության հեղինակավոր ժողովածուներում	**Ռ.Ծ 2.3.2** 2019-20թ.թ.	Ամբիոն	Ամբիոնի երկու դասախոսների կողմից տպագրվել են հոդվածներ	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածու 2019թ. 1(21) համարում	Քիչ են ուսումնամեթոդական հոդվածները	10. 12-2019թ. նոր հոդվածների պատրաստում
Աջակցություն երիտասարդ դասախոսների նորագույն ծրագրերին	**Ռ.Ծ 4.1.5** 10.2019թ.	Ուսումնամեթոդական վարչության ԱԿԲ Ֆակուլտետներ Ամբիոններ	Երիտասարդ դասախոսական կազմի ուսմնամեթոդական պատրաստվածության	Դասերի 80%-ը դասախոսները անց են կացնում ֆրանսերենի ուսուցման սրահում՝	Բավարար վիճակում չեն ֆրանսերենի տեսական	Բարձրացնել տեսական դասընթացների ընթացքում նոր տեխնոլոգիաների

			բարձրացում	նորագույն մեթոդներով	դասընթացները, որոնք մշտապես կատարել ագործման կարիք ունեն	կիրառման հնարավորությունները

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԲԻՈՆԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԾ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ինչո՞ւ	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
1.2.2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը: Ամբիոնի դասախոսներից 1-ը (Ալիսա Հասանյան) 2020 թ. ԲՈԿ-ի կողմից ստացել է դոցենտի գիտական կոչում:		Ուստարվա ընթացքում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:
1.2.3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունավետ և ձևավորվող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Ուստարվա սկզբին մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում): Երկրորդ կիսամյակում համաճարակի բռնկման պատճառով գնահատման գործիքներում տեղ են գտել փոփոխություններ, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, հաստատվել, իսկ արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի	Չեն ստեղծվել համապատասխան ձեռնարկներ դրանց անհրաժեշտության բացակայության պատճառով:	Ոչինչ չի պլանավորվել:

		գիտխորհրդին՝ հաստատման:		
1.2.5. Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Ուսանողների մասնագիտական գիտելիքների ապահովում, ուսումնառության գործընթացի բարելավում:	Կազմվել են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ)՝ բոլոր առարկայական դասընթացների համար:		Ըստ անհրաժեշտության՝ վերանայել և փոփոխել:
1.2.6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից: Իրականացվել է կուրսային և ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողություն: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից բարձրարժեք ավարտական աշխատանքներ, որոնց մասին իր գոհունակությունն է հայտնել 2019-20 ուստարվա ավարտական աշխատանքների		Ուստարվա ընթացքում ուսանողների հետ անցկացնել զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելել ու կանխել մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից:

		պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահ, մանկ. գիտ. թեկն., դոցենտ Լավրենտի Միրզոյանը (առկա է գրավոր հաշվետվությունը):		
1.3.3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամբիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, արվել են հետևություններ:		Ուստարվա ընթացքում ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնել նկատված թերությունները, անել դիտարկումներ, քննարկել ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, անել հետևություններ:
1.4.1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունի-վերսալ էլեկտ-րոնային հա-մակարգ՝ ուսումնառու-թյան ռեսուրս-ների առցանց մատուցման հա-մար:	Ժամանակակից առցանց հնարավորությունն երի կիրառություն ուսուցման գործընթացում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի, WhatsApp, Viber համակարգերի, ինչպես նաև Facebook սոցիալական ցանցի միջոցով:		Նախատեսել ենք մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ սովորել օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները առցանց քննություններ կազմակերպելու համար:
1.4.2. Ձևավորել անհրաժեշտ տեխ-նոլոգիական և մեթոդական հենք՝ ուսում-նառության	Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների ներդրում:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունի-վերսալ էլեկտրո-նային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝		Նախատեսել ենք մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ սովորել օգտագործել **Google forms** ձևաչափի

էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներ-դրման համար:		հեռավար եղանակով հիմնականում իրականացվել են դասընթացները:		հնարավորություններ առցանց քննություններ կազմակերպելու համար:
1.4.3.Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:	Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունի-վերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով ապահովվել են դասընթացները:		Նախատեսել ենք մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ սովորել օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորություններ առցանց քննություններ կազմակերպելու համար:
1.4.5.Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազ-մակերպում:	Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:		Ուսումնական տարվա ընթացքում շարունակել ծրագրերի համար էլեկտրոնային տարբերակների մշակումն ու տեղադրումը համացանցում:
1.4.6.ա/ Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ երիտասարդ դասախոսների համար:	Երիտասարդ դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:	Իրականացվել է դասընթաց՝ «Տեսականի և գործնականի կապը դասապրոցեսում» /դաս.՝ Ա. Սարհատյան/:		Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների ուժերով նախատեսվել են այլ թեմաներով դասախոսություններ:
1.4.6.բ/ Ամրապնդել միջամբիոնային կապերը:	Միջամբիոնային կապերի ամրապնդմամբ ձեռք բերել համատեղ գործունեությամբ պայմանավորված գիտական արդյունքներ, բարձրացնել Իմ-ի վարկանիշը:	Օտար լեզուների ամբիոնի հետ համագործակցելով՝ ամբիոնի դասախոսները ստանձնել են արտասահմանյան ժամանակակից հայտնի մի շարք հեղինակների տարբեր		Ընթացքի մեջ է:

		ստեղծագործությունների՝ անգլերենից հայերեն թարգմանությունների խմբագրական աշխատանքներ:		
1.4.6.գ/ Աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:	Ամբիոնի դասախոսական աշխատակազմի խորհրդատվություն և աջակցություն ուսանողներին, ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացում, մասանագիտության հեղինակության բարձրացում:	2019 թ. հոկտեմբերի 3-ին ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված ԵՊՀ-ի ՈւԳԸ հրավիրած միջազգային 6-րդ գիտաժողովում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհիներ **Ղազարյան Աստղիկը** («Մազի խորհուրդ-սիմվոլը հայ ժողովրդական բանահյուսության մեջ») և **Ռոզա Մելքումյանը** («Գաբրիել Սունդուկյանի «Գիշիրվան սաբրը խեր է» վոդևիլի համեմատական վերլուծությունը») կարդացել են զեկուցումներ (**ղեկավար՝ Վ. Ավագյան**): Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր, որոշվել է զեկուցման նյութերը վերածել գիտական հոդվածների և տպագրել առանձին ժողովածուով:		Ուսումնական տարվա ընթացքում աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:
1.4.6.դ/ Ապահովել հեռակա ուսուցման	Հեռակա ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպում:	Հեռակա ուսուցման դասընթացների համար մշակվել են		Ուսումնական տարվա ընթացքում ապահովել

դասընթացները համապա-տասխան էլեկտրոնային ռեսուրսներով:		էլեկտրոնային տարբերակներ:		հեռակա ուսուցման դասընթացները համապա-տասխան էլեկտ-րոնային ռե-սուրսներով:
1.4.7.Կանոնա-կարգել և ընդ-լայնել առցանց եղանակով իրականացվող դասընթաց-ները:	Արդի պահանջներին համապատասխան ող ուսուցման ապահովում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի, WhatsApp, Viber համակարգերի, ինչպես նաև Facebook սոցիալական ցանցի միջոցով:		Նախատեսել ենք մինչև 2019-2020 ուստարվա սկիզբ սովորել օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները առցանց քննություններ կազմակերպելու համար:
2.1.1.Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակում-ներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:	Գիտահետազոտական գործունեության արդյունա-վետության գնա-հատման ցուցա-նիշների սանդղակի կազմում և գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում:	2019-2020 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսների հեղինակությամբ հրատարակվել է 3 գիտական հոդված (**Վ. Ավագյան**, «Հովաննես Թումանյանի և Արշակ Չոպանյանի առնչություններից» (Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ), «Բանբեր Երևանի համալսարանի: Բանասիրություն», № 2 (29), «ԵՊՀ» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 3-12, **Վ. Ավագյան**, «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության և դերի արժևորումը Փարիզի «Ապագայ»	Գիտահետազոտական գործունե-ության արդյունա-վետության գնա-հատման ցուցա-նիշների սանդղակ չի կազմվել, քանի որ դժվարանում ենք դեռ հստակ պատկերացնել գնահատման չափանիշները:	Անորոշ է:

		շաբաթաթերթում (1921-1925 թթ.)», «Հայագիտության հարցեր», Եր., 2019, 3(18), էջ 181-195, **Վ. Ավագյան,** «Մխիթարեանների դերի գնահատումը ժամանակի եւ ազգային հեռանկարի տեսանկիւնից», «Էջմիածին», Ս. Էջմիածին, ՀՁ. Տարի, Ժ, 2019, էջ 115-128: Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել:		
2.1.2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում: Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակվող հոդվածների քանակի ավելացում:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել, քանի որ դեռ հստակ չենք պատկերացնում, թե ինչպես կարելի է խրախուսել հեղինակներին:	Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:
2.1.3. Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում գիտական աշխատանքի նկատմամբ և նրանց կողմից իրականացվող գիտական աշխատանքների ծավալի մեծացում:	ԻՄ-ի ՈւԳԸ-ի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի հետ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները		Ուսումնական տարվա ընթացքում խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:

		ունեն սերտ կապեր և համագործակցության բարձր ակտիվություն:		
2.2.1.Աջակցել գիտահետազոտական կենտրոն-ների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրակա-նացմանը:	Մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապի ամրապնդում՝ մարզում գիտական-մշակութային միջավայրի զարգացման նպատակով:		Ոչինչ չի արվել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերի և հետաքրքրությունների բացակայության պատճառով:	Ուսումնական տարվա ընթացքում աշխուժացնել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերն ու հետաքրքրությունները:
2.2.2.Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին:	Համագործակցային փոխհարաբերություններ ձևավորում տարածաշրջանային բուհերի հետ:	Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել:	Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել մասնագիտական հետաքրքրությունների բացակայության պատճառով:	Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:
2.2.3.Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցու-թյամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	Տարածաշրջանի կրթօջախների կարիքների վերհանում և այդ կարիքներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերի մշակում:	Արդյունք չի արձանագրվել:	Ծրագիրը մնացել է թերի, քանի որ ամբիոնի նախաձեռնություններին, այցելություններին, առաջարկություններին համայնքներն առայժմ արձագանք չեն տվել: Խանգարել է նաև համավարակը:	Անորոշ է. սպասում ենք դպրոցների տնօրինությունների առաջարկություններին և համավարակի ավարտին:
2.3.1.Խրախուսել միջազգային գիտական շտե-մարաններում ընդգրկված ամսագրերում	Միջազգային գիտական շտե-մարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել, քանի որ միջազգային շտե-մարաններում ընդգրկված	Անորոշ է, ոչինչ չենք պլանավորել:

մասնաճյուղի աշխատողների հրապարա-կումները:	դասախոսների հոդվածների հրապարակում և դրանց թվի աճ:		ամսագրերում ամբիոնի դասախոսները հրապարա-կումներ չեն ունեցել:	
2.3.2. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում:	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում օտար լեզուներով հոդվածների թվի աճի ապահովում:	Որևէ արդյունք չկա, քանի որ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն իր գործունեությունը անորոշ ժամանակով կասեցրել է:	Ամբիոնի գիտական հետաքրքրություն ների շրջանակը դուրս չի եկել միջազգային միջավայր:	Անորոշ է:
2.3.3.Կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ, հանրապետական, միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:	Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում տարբեր գիտական կազմակերպություն ների հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցության աճ:	ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում դոցենտ, բ. գ. թ. **Ալիսա Հասանյանը** ուսանողների հետ կազմակերպել է բազմաբնույթ միջոցառումներ, գրական բանավեճեր, գրքի շնորհանդեսներ ու քննարկումներ, հաճախ հանդես եկել զեկուցումներով: Ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Սիդա Սարհատյանը** ուսանողներին հանձնարարել է հետազոտական և ստեղծագործական տարաբնույթ ինքնուրույն աշխատանքներ՝ մասնագիտական ուղղվածությամբ ռեֆերատներ, էսսեներ, վերլուծական և նկարագրական բնույթի շարադրանքներ, գործնական գրություններ, թեմատիկ		Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ:

		մշակումներ մասնագիտական գրականությունից, հայ դասական գրականության լավագույն նմուշների լեզվառճական բնույթի վերլուծություններ: Դաս-միջոցառումներ է ունեցել՝ նվիրված մեծանուն մարդկանց հոբելյաններին, կարևոր պատմական իրադարձություններին: ՏՄՄ 3-րդ և 4-րդ կուրսում Ուսուցչի օրվա առթիվ անցկացրել է զրույց-միջոցառում. «Վաղը ես ուսուցիչ եմ լինելու…» թեմայով: ՏՄՄ 3-րդ և 4-րդ կուրսերում հանձնարարել է զեկուցումներ՝ «Մեծ մանկավարժների դասերը»՝ համապատասխան մասնագիտական գրականությամբ, և նույն կուրսերում ունեցել գործնականի ժամեր՝ «Դասը վարում են ուսանողները» թեմայով: Դեկտեմբերի 12-ին ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Ա. Սարհատյանի** նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ԵՊՀ ԻՄ-ի		

		դահլիճում ներկայացվել է ուսանողական գրական-գեղարվեստական-երաժշտական միջոցառում՝ «Հայ քնարերգության երաժշտական գույները» խորագրով: Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում նույն միջոցառումը դեկտեմբերի 19-ին ներկայացվել է Իջևանի թիվ 4 դպրոցում՝ արժանանալով թե՛ աշակերտության, թե՛ ուսուցչական կազմի ջերմ ու բարձր գնահատանքին: Ամբիոնի դասախոսներ **Ա. Սարհատյանն** ու **Ա. Հասանյանը** մասնակցել են Օտար լեզուների ամբիոնի կազմակերպած «Հայ-ֆրանսիական առնչություններ» խորագրով միջոցառմանը, իսկ **Կ. Պողոսյանն** ու **Վ. Աղաբաբյանը**՝ Եվրոպական լեզուների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը: Դեկտեմբերի 20-ին մասնաճյուղի գրադարանում կայացել է Վարդգես		

		Ահարոնյանի «Լևոն Շանթ. Մարդը և գործիչը», «Անդրանիկ. Մարդը և ռազմիկը», «Յովհաննէս Թումանեան. Մարդը և բանաստեղծը» գրքերի շնորհանդեսը, որտեղ զեկուցմամբ հանդես է եկել ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Ա. Հասանյանը**:		
2.3.4. Աջակցել արտասահմանյան գործընկեր-ների հետ համագործակցության շարու-նակականությանն ու խորաց-մանը:	Համագործակցություն արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ:	ՀՀ Գիտության կոմիտեի գիտական թեմաների հայտերի փորձաքննության մրցույթին ներկայացված «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի (թեմայի ղեկավար ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., դոցենտ Վաչագան Ավագյան) հետազոտական խմբում ընդգրկված է Վարշավայի համալսարանի պրոֆեսոր **Մարիա Կալինովսկան**: Առկա է նրա՝ փոխադարձ համագործակցությունը հաստատող պաշտոնական նամակը: Հետազոտական խմբի ոչ պաշտոնական գործընկերն է Դելիի		«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի ուսումնասիրությունը նախատեսել ենք իրականացնել երեք տարվա ընթացքում: Մարիա Կալինովսկայան զբաղվում է լեհական և անգլիական ռոմանտիզմի լուսաբանման հարցերով, քաջածանոթ է անգլիական գրականությանը: Մենք նպատակադրված ենք Մ. Կալինովսկայի հետ համագործակցել հիմնականում նախագծի իրականացման առաջին և վերջին փուլերում,

		համալսարանի դասախոս, դոկտոր **Մադիու Գրովերը**:		այսինքն՝ հայագիտության թեման Անգլիայում ուսումնասիրելիս և աշխատանքի ավարտման փուլում՝ քննարկումների, դիտողությունների վերացման, ստացված արդյունքների ճշգրտման ու գնահատման, ինչպես նաև միջազգային գիտաժողովի կազմակերպման ժամանակ: Դելիի համալսարանի դասախոս, դոկտոր Մադիու Գրովերը բարեհոժար համաձայնել է անշահախնդրորեն համագործակցել մեզ հետ և անհրաժեշտության դեպքում հայթայթել և ուղարկել հարկավոր նյութեր, ինչպես նաև մասնակցել թեմայի կատարմանը առնչվող միջոցառումների ն:
4.1.2.Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ կատարելագործել	Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչների և գործընթացների վերանայում, հիմնական դասախոսական կազմի՝ որակավորման բարձրացման	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ամբիոնի դոցենտներ **Վաչագան Ավագյանը**	Դասախոսական կազմի համալրման ծրագիր չի մշակվել դրա անհրաժեշտության բացակայության պատճառով:	Անորոշ է:

դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:	կրթական ծրագրերին պարտադիր և լիարժեք մասնակցություն:	մասնակցել է «Ուսուցման ժամանակակից մեթոդները» և «Ակտիվ ուսումնառության մեթոդները», իսկ **Լուսինե Թումանյանը** և **Ալիսա Հասանյանը՝** «Առարկայական ծրագրեր մշակելու ABC/ԱԲԳ դասընթաց», «Համակցված դասավանդում և ուսուցում», «Ինչպես օգտագործել Google forms ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար» դասընթացներին:		
4.1.4. Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:	Կրթական ծրագրի վերջնարդյունքների և դրանց համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորում:	Կրթական ծրագրերի մասնագրերում դրվել են համապատասխան պահանջներ, որոնցով նաև առաջնորդվել է ամբիոնը յուրաքանչյուր դասախոսին տվյալ առարկայով ծանրաբեռնելիս:		Ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի մասնագրերում դնել համապատասխան պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվի ամբիոնի յուրաքանչյուր դասախոս տվյալ առարկայով ծանրաբեռնվելիս:
4.1.5. Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության	Դասախոսների ներգրավվածություն կրթական նորագույն ծրագրերում:	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ամբիոնի դոցենտներ		Ուսումնական տարվա ընթացքում ակտիվացնել դասախոսների ներգրավվածությունը կրթական նորագույն ծրագրերում:

բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:		**Վաչագան Ավագյանը** մասնակցել է «Ուսուցման ժամանակակից մեթոդները» և «Ակտիվ ուսումնառության մեթոդները», իսկ **Լուսինե Թումանյանը** և **Ալիսա Հասանյանը՝** «Առարկայական ծրագրեր մշակելու ABC/ԱԲԳ դասընթաց», «Համակցված դասավանդում և ուսուցում», «Ինչպես օգտագործել Google forms ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար» դասընթացներին:		
4.1.6. Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերի ապահովում:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել:	Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել, քանի որ գիտխորհրդի կողմից հաստատված նորմեր չեն վերանայվել:	Անորոշ է:
8.1.1. Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորմա	ԵՊՀ-ի գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնում ու ակտիվացում, մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացում, ինչպես		Ամբիոնը մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացման, ինչպես նաև պետական ֆինանսավորման ավելացման հարցերի վերաբերյալ որևէ	Անորոշ է:

ն ծավալների մեծացմանը:	նաև պետական ֆինանսավորման ավելացում:		արդյունք չունի, քանի որ առայժմ առարկայապես չի պատկերացնում իր անելիքները այդ հարցերում:	
8.1.2. Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրություն՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու ձգտում:	Ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., դոցենտ Վաչագան Ավագյանի ղեկավարությամբ ՀՀ Գիտության կոմիտեի գիտական թեմաների հայտերի փորձաքննության մրցույթին է ներկայացվել «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեման, որի հետազոտական խմբում ընդգրկված է նաև «ԵՊՀ» հիմնադրամի ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» ամբիոնի դասախոս Մանե Աղբալյանը:		Թեմայի ուսումնասիրման սահմաններում նախատեսում ենք երեք տարվա ընթացքում անդրադառնալ XIX դարի արևմտաեվրոպացի նշանավոր հայագետներին, հանգամանորեն ուսումնասիրել նրանց՝ մեր թեմայի շրջանակում հետաքրքրությունն ներկայացնող գիտական աշխատությունները: Նախատեսում ենք նաև անդրադառնալ Եվրոպայում հայագիտական հսկայական աշխատանք կատարած Մխիթարյանների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի հայ գաղթօջախների որոշ ներկայացուցիչների հայագիտական գործունեությանը: Հետազոտության ընթացքում նախատեսում ենք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կայքէջում ավելացնել

				«Հայագիտությունը Եվրոպայում» էլեկտրոնային շտեմարան-գրադարան բաժին և այնտեղ տեղադրել նախագծով կատարված հետազոտության արդյունքները դրանք հետագայում լրացնելու պայմանով: Նախատեսում ենք «գրադարանի» նյութերը հետաքրքրասեր ընթերցողին ներկայացնել մատենաշարի ձևով նախ էլեկտրոնային, իսկ բարեհաջող գործընթացի պարագայում (դրանք հատվածաբար կամ ամբողջությամբ տպագրելու հնարավորության դեպքում)՝ նաև առանձին գրքերի (գրքույկների) հրատարակման տարբերակով: Հեռանկարում նպատակադրված ենք ինչպես մեր հետազոտությունների արդյունքները, այնպես էլ «Հայագիտությունը Եվրոպայում» էլեկտրոնային շտեմարան-գրադարանի բոլոր նյութերը ներկայացնել երկու լեզվով՝

				հայերեն և անգլերեն: Հնարավորության դեպքում մասնաճյուղը կարող է «գրադարանի» նյութերի հիման վրա կազմակերպել «Եվրոպական հայագետներ» մատենաշարի հրատարակություն: Այդ մատենաշարը կկրի շարունակական բնույթ և կընդգրկի ինչպես հայագետների կենսագրականները, նրանց աշխատությունների նկարագիրը, դրանց վերլուծությունները, այնպես էլ առանձին հատվածներ դրանցից (կամ ամբողջ աշխատությունը): Բացի այդ՝ նախատեսվում է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպել հայագիտության հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԾ գործողությունը	Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում	Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)	Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞	Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում
1.2.2Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման մեխանիզմը՝ կարևորելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը:	Դասաժամի արդյունավետ գործածություն՝ էլեկտրոնային նյութերի և տեխնոլոգիական հնարավորությունների գործածությամբ, ուսանողների ապահովվածություն անհրաժեշտ ուսումնական նյութերով, դասավանդման և ուսումնա	Ինչպես գիտենք, 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակի զգալի մասը (սկսած մարտի 12-ից), պայմանավորված հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակով, անցել է առցանց ուսուցմամբ: Այս առումով, իհարկե, կարևորվել են ուսուցման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները: Մինչև մարտ ամսի վերջը ֆակուլտետի ամբիոնների դասախոսների մեծ մասը սեփական նախաձեռնությամբ դասընթացներն իրականացրել է առցանց տարբեր հարթակներում Zoom-ով, Messenger-ով, Viber-ով, Moodle-ով, Google Meet-ով, WhatsApp-ով, Classroom-ով, Skype-ով, իսկ գրավոր նյութեր ուղարկվել են նաև e-mail-ով: Մարտի վերջից մասնաճյուղում	Խրախուսում չի իրականացվել, որովհետև ստեղծված իրավիճակում բավական դժվար էր ճիշտ կողմորոշվել:	Խրախուսման համար ունենք կարգ, և հեռավար ուսուցման շարունակման պարագայում այս առումով կառանձնացվեն այն դասախոսները, որոնք գործածում են առցանց ուսուցման համար տարբեր առցանց գործիքներ և բավական հմուտ են դրանց կիրառման մեջ :

	ռության գործընթացի բարելավում : Պարբերական սեմինարներ՝ դասավանդման փորձի փոխանակման նպատակով:	առցանց դասերն իրականացվել են կանոնավոր կերպով, ըստ դասացուցակի, մասնաճյուղի ղեկավարության հրահանգով ՏՀՍԶԲ-ի կողմից ստեղծված միասնական zoom հարթակի միջոցով: 2019-20 ուստարվա I կիսամյակի ընթացքում ամբիոններում իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:Ֆակուլտետի ամբիոնների (հայոց լեզվի և գրակ., պատմ., մանկ. և հոգեբ.) դասախոսներից 3-ը 2020թ.-ին ԲՈԿ-ի կողմից ստացել են դոցենտի գիտական կոչումներ, 1-ը ԲՈԿ-ի կողմից ստացել է պրոֆեսորի կոչում (պատմ. և հասար. ամբիոն), 1-ը՝ ասիստենտի կոչում (պատմ. և հասար. ամբիոն), 1 դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն (պատմ. և հասար. ամբիոն):		

1.2.3 Կրթա փորձի կարգո վ ներդնե լ գնահա տման նոր մեթոդ ներ՝ հիմնվ ած ակնկա լվող կրթակ ան վերջն արդյու նքների գնահա տման վրա:	Ակնկալվո ղ կրթական վերջ-նարդյունք ներից բխող գնահատմ ան համակար գ: Ֆորմատի վ գնահատմ ան մեթոդ-ների ընդլայնվ ած կիրա-ռում կրթական ծրագ-րերում:	Ամբիոններին հանձնարարված է եղել դասավանդվող դասընթացներից յուրաքանչյուրի համար մշակել դասընթացի ակնկալվող կրթական վերջ-նարդյունքների վրա հիմ-նված գնահատման նորմեր և չափանիշներ, հնարավորինս վերանայել գնահատման չափանիշները և գնահատման նոր մեթոդները ներառել առարկայական պորտֆոլիոներում՝ գնահատման մեջ: Այդ բոլոր փոփոխությունները 2019-20 ուստարվա II կիսամյակի քննաշրջանից առաջ քննարկվել և հաստատվել են ամբիոնների նիստերում, որոնց քաղվածքները ներկայացվել են ՈւՄՎ բաժին: Գնահատման նոր մեթոդները կիրառվել են քննաշրջանի ընթացքում:		
1.2.4 Ուսում նասիր ել դասա-վանդ-ման, ուսում նառու-	Ուսումնա ռության և հետազոտ ության ինտեգրմ ան ծրագրերի իրականա ցում և արդյունքն երի վերլուծու թյուն՝ ուսումնա	2019-20 ուստարվա II կիսամյակի սկզբին տնօրենի հանձնարարությամբ ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ կրթական ծրագրերի ղեկավարների անմիջական համակարգմամբ, որպեսզի ամբիոններում բարելավման		

թյան և հետազոտությանինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:	ռության արդի պահանջների և համապատասխան:	նպատակով ուսումնասիրվեն բակալավրի կրթական ծրագրերն՝ ըստ առանձին մասագիտությունների: 2020 թ.-ի մարտի 12-ի ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատվել է բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգը: Ֆակուլտետի ամբիոններում տեղի են ունեցել քննարկումներ դասընթացներում կրթական բաղադրիչի ներդրման վերաբերյալ և ամբիոնների նիստերում կայացվել են որոշումներ, թե կոնկրետ ո՛ր դասընթացներին է վերագրվում հետազոտական բաղադրիչը: Ամբիոնների համապատասխան նիստերի արձանագրությունները ներկայացվել են ՈւՄՎ բաժին: Բացի այդ, հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացների մասնագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Այսպիսի բաղադրիչ ունեցող դասընթացների վերափոխված պորտֆոլիոները պիտի		

		պատրաստ լինեն մինչև 2020թ.-ի օգոստոսի 20-ը:		
1.2.6 Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով:	Քննական գործընթացների թափանցիկություն, ուսանողների գիտակցության մեջ սեփական ուժերին և կարողություններին ապավինելու հատկանիշի ձևավորում:	Սկսած 2018-2019 ուստարվանից՝ գրավոր ընթացիկ ստուգումները և քննություններն անցկացվել են տեսահսկվող միջոցներով կահավորված քննասենյակներում՝ որոշակի առումով նվազեցնելով գրագողության հնարավորությունը: 2019-2020 ուստարվա I կիսամյակի գրավոր ընթացիկ ստուգումները և քննություններ ևս իրականացվել են նշված քննասենյակներում: 2019-2020 ուստարվա II կիսամյակում, ելնելով համաճարակային իրավիճակից թելադրված պայմաններով, ընթացիկ ստուգումները և քննությունները չեղարկվել են, և ավարտական կուրսերի, ինչպես նաև ամառային քննաշրջաններն անցկացվել են zoom հարթակի միջոցով՝ առցանց եղանակով: Ընդ որում, ապահովելու համար քննությունների ընթացքում ակադեմիական ազնվությունը, քննական		

		ընթացքը տեսաձայնագրվել է և ուղարկվել ՈւՄՎ (ավարտական կուրսերի քննություններ), իսկ ամառային քննաշրջանն իրականացվել է ԵՊՀ-ի կողմից տրամադրված չընդհատվող, արտոնագրված zoom-երով, որոնք ավտոմատ տեսաձայնագրում են ապահովել: Քննությունների ընթացքը վերահսկվել է նաև ՈւՄՎ տեսուչների, դեկանի և ամբիոնների վարիչների կողմից: Բացի այդ, ակա-դեմիական ազնվությանն են նպաստել անհատական առաջադրանքների կազմումը, առանձին դասընթացների համար ամբիոնների կողմից հաստատված գնահատման ձևերը, ավարտական և կուրսային աշխատանքներին վերագրվող չափանիշների հստակ վերահսկողությունը, ավարտական աշխատանքների համար առանձին փաթեթների կազմումը և հավաքագրումը: Ուսանողները քննական գործընթացներից առաջ տեղեկացվել են ակադեմիական ազնվության		

		կարգի մասին: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող թեմաներով կուրսային և ավարտական աշխատանքներ, որոնցից վերջինների մասին իրենց գոհունակությունը, նաև դիտողություններն են հայտնել 2019-20 ուստարվա ավարտական ատեստավորման հանձնաժողովների նախագահները (առկա են գրավոր հաշվետվություններ):		
1.3.2 Վերանայել և գործադրել կրթական ծրագ-րերի ընթա-ցիկ մշտա-դիտարկման (մոնի-թորինգի) և պար-	Թարմացված և բարելավված կրթական ծրագրեր: Մշտադիտարկումից և պարբերական վերանայումից բխող վերլուծություններ:	Կրթական ծրագրերի վերանայման նպատակով տնօրենի հրամանով 2020 թ.-ի փետրվար ամսին ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ կրթական ծրագրերի ղեկավարների գլխավորությամբ, որոնցում ընդգրկվել են ամբիոնների վարիչներ, պրոֆեսորադասախոսական համակազմի անդամներ, ուսանողներ, արտաքին շահակիցներ՝ կրթական ծրագրերում լրացումներ և շտկումներ կատարելու համար:		Սա շարունակական գործընթաց է: 2020 թ.-ի մարտին բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչ ներդնելու կարգի հաստատումից հետո ամբիոններում նաև այս առումով են վերանայվում և փոփոխվում կրթական ծրագրերի մասնագրերը:

բերական վե-րանայ-ման կարգը:				
1.3.5 Նախաձեռնել և իրականացնել ինքնագնահատման ինստիտուցիոնալ գործընթաց:	Գործունեության թույլ կողմերի վերանայումն ու շտկումը:	Նախատեսվում էր այս խնդրով զբաղվել 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակում, սակայն ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ քայլեր չեն ձեռնարկվել:		Հարկավոր է ամբիոններից հավաքագրել առաջարկներ և դրանց քննարկման միջոցով որոշել այն չափանիշները, ըստ որոնց պիտի կատարվի ինքնագնահատումը: Այդ չափանիշները ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը (հաջորդ ուստարի):
1.4.1 Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեր-ուսուցման ունի-վերսալ էլեկտ-րոնա-յին հա-մակարգ՝	Ժամանակակից առցանց հնարավորությունների կիրառությունը ուսուցման գործընթացում:	2019-2020 ուստարվա II կիսամյակի մարտի վերջից կորոնավիրուսի համաճարակի պատճառով հանրապետությունում ստեղծված արտակարգ իրավիճակի պատճառով անցում կատարվեց առցանց ուսուցման, ընդ որում ընտրվեց միասնական zoom հարթակ, որպեսզի դասապրոցեսը լինի վերահսկելի, հստակ դասացուցակով: Պետք է նշել, որ ֆակուլտետի դասախոսական համակազմի հիմնական		Ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման հնարքներին տիրապետելու և մասնավորապես ամառային քննաշրջանում դրանք գործածելու նպատակով մասնաճյուղում կազմակերպվել է դասընթաց՝ «Ինչպե՞ս օգտագործել Google forms ձևաչափի հնարավորություններն առցանց քննությունների համար» վերնագրով:Ֆակուլտետի որոշ դասախոսներ

ուսում նառու-թյան ռեսուր սների առ-ցանց մատու ցման հա-մար:		մասը բավական արագ կարողացավ հարմարվել ստեղծված նոր իրավիճակին, և ընդհանուր առմամբ մեծ ձախողումներ չեղան:		դասընթացից ձեռք բերած գիտելիքները կիրառել են քննական թեստեր և տարբերակներ կազմելով և տրամադրված քննական ժամանակահատվածում դրանք կիրառելով:
1.4.3 Վերա պատ-բաս-տել դասա-խոսակ ան կազմը ուսու-մնա-ռու-թյան էլեկ-տրոնա յին ռե-սուրս-ների ստեղծ ման և մա-տուց-ման համար:	Դասավան դման ժամանակ էլեկտրոն ային ռեսուրսնե րի կիրառությ ուն: Դասապրո ցեսի արդյունա վետ կազմակե րպում:	Դասախոսական կազմից ձևավորվել են խմբեր, որոնք 2019-20 ուստարվա տարբեր ժամանակահատվածներում մասնակցել են էլեկտրոնային ռեսուրսների կիրառությամբ առանձին վերապատրաստման դասընթացների («Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ» մոդուլում ներառված «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում»- սեպտեմբեր 2019թ., «Համակցված դասավանդում և ուսուցում»- փետրվար 2020 թ., ՝ «Ինչպե՞ս օգտագործել Google forms ձևաչափի հնարավորություններն առցանց քննությունների համար»-մայիս 2020թ.) :		Վերապատրաստումները շարունակական բնույթ են ունենալու:

1.4.5 Ապա-հովել կրթակ ան ծրագր երը ուսում նառու-թյան էլեկտր ոնային ռեսուր սներով :	Կրթական ծրագրերի ապահովվ ածություն էլեկտրոն ային ռեսուրսնե րով՝ուսու մնառությ ան գործընթա ցի արդյունա վետ կազմակե րպման համար:	Կրթական ծրագրերի համար մշակվել են առարկայական էլեկտրոնային տարբերակներ (դասախոսություններ, առաջադրանքներ, ինքնուրույն հանձնարարականների թեմաներ, հարցաշարեր, օժանդակ նյութեր, գրականության ցանկ ևն), որոնք գործառության մեջ են դրվել և հասանելի են եղել ուսանողներին հատկապես 2019-2020 ուստարվա II կիսամյակում, երբ անցում է կատարվել առցանց ուսուցման: Դրանք հատկապես ամրագրված են Moodle-ը կիրառող դասախոսների դասընթացներում:		Գործընթացը շարունակական բնույթ է կրում, և կրթական ծրագրերը համալրվում են նոր էլեկտրոնային ռեսուրսներով:
1.4.6 Ապահով ել հեռակա ուսուցմա ն դասըն-թացներն համապա տասխան էլեկտրո-նային ռե-սուրս-ներով:	Հեռակա ուսուցման դասընթա ցների արդյունա վետ կազմակե րպում և դրանց ապահովվ ածություն էլեկտրոն ային ռեսուրսնե րով:	Հեռակա ուսուցման տարբեր դասընթացների համար ևս մշակվել են էլեկտրոնային դասախոսություններ, տարբերակներ, հարցաշարեր և հանձնարարականներ, որոնք կիրառվել են 2019-20 ուստարվա II կիսամյակի առցանց ուսուցման ժամանակահատվածում: Էլեկտրոնային դասախոսությունները ևս CD դիսկերով առկա են		Գործընթացը շարունակական բնույթ է կրում:

		Մասնաճյուղի գրադարանում:		
1.4.7 Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	Արդի պահանջներին համապատասխանող առցանց եղանակով իրականացվող ուսուցում:	2019-2020 ուստարվա II կիսամյակում անկանխատեսելի համաճարակային իրավիճակից ելնելով՝ բոլոր դասընթացներն իրականացվեցին առցանց եղանակով: Սա առաջին քայլն էր և փորձը արդի ուսումնառության պահանջներին համապատասխան առցանց ուսուցում իրականացնելու ճանապարհին:	Դեռևս չկա առցանց ուսուցման մշակված կանոնակարգ:	Այս խնդիրն իրականացնելու համար դասախոսների վերապատրաստումը շարունակական բնույթ է կրում:
2.1.1 Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարվ	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում և հետազոտական գործունեության խրախուսում:	2019-2020 ուստարվա ընթացքում Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսների հեղինակությամբ հրատարակվել է 3 գիտական հոդված (**Վ. Ավագյան**, «Հովաննես Թումանյանի և Արշակ Չոպանյանի առնչություններից» (Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ), «Բանբեր Երևանի համալսարանի: Բանասիրություն», № 2 (29), «ԵՊՀ» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 3-12, **Վ. Ավագյան**, «Հովհաննես Թումանյանի	Գիտահետազոտական գործունեության արդյունավետությունն աշխուժացնելու նպատակով ԵՊՀ ԻՄ-ի 2019թ.-ի դեկտեմբերի 28-ի նիստում հաստատվեց ,Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի	

ած հղում-ներով և այլ ընդունվա ծ ցու-ցանիշ-ներով:		ստեղծագործության և դերի արժևորումը Փարիզի «Ապագայ» շաբաթաթերթում (1921-1925 թթ.)», «Հայագիտության հարցեր», Եր., 2019, 3(18), էջ 181-195, **Վ. Ավագյան,** «Մխիթարեանների դերի գնահատումը ժամանակի եւ ազգային հեռանկարի տեսանկիւնից», «Էջմիածին», Ս. Էջմիածին, ՀԶ. Տարի, Ժ, 2019, էջ 115-128: Օտար լեզուների ամբիոնի դասախոսները մասնակցել են 2019 թվականի սեպտեմբերին ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի և անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված ԵՊՀ հարուրամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Մայիսի 15-ին ամբիոնի վարիչի կողմից իրականացվել է առցանց գիտական սեմինար "Ethnopsycholinguistics as a new discipline" թեմայով: Լույս են տեսել ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակված 7 հոդվածներ, որոնցից 5-ը՝ ուսանողների հետ	աշխատողնե րին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարներ ի հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն հավելված 5-ի: Սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները տարածվում են 2019թ. սեպտեմբերի 1-ից հետո հրապարակվ ած աշխատանքն երի վրա:	

		համատեղ: Ֆրանսերենի սեկցիայի երկու աշխատակիցներ հոդվածներ են հրատարակել «Ակունք» գիտամեթոդական ժողովածուում (2019 1(21)): Ընթացիկ ուստարում Պատմության և հասարակագիտության ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Մի շարք հոդվածներով և զեկուցումներով (այդ թվում նաև մենագրություն, դասագիրք) հանդես են եկել պ.գ.թ., դոցենտ Դավիթ Թինոյանը / Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը Հեթում Բ-ի գահակալության առաջին շրջանում, Պատմություն եւ մշակույթ, 2019, էջ 38-42 /, քաղ.գ.թ., դոցենտ Հովսեփ Մովսեսյանը / THE PROBLEM OF MOTIVATION FOR POLITICAL LEADERS, NORWEGIAN JOURNAL OF DEVELOPMENT OF THE INTERNATIONAL SCIENCE, 2019, N 34, Norway, 50-53 pp /. Քաղաքական իշխանության լեգիտիմության արժեքային բազմաչափությունը, Հայաստանի		

		Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, հոկտեմբեր 08-09, Երևան, 2019, էջ 308-314: Личность политического лидера, ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНЫХ И ФЕДЕРАТИВНЫХ ОТНОШЕНИЙ, 2019, N 11/56, Москва, стр. 1930-1936. Личность политика в контексте профессиональной деятельности, ВОПРОСЫ ПОЛИТОЛОГИИ, 2019, N 11/51, Москва, стр. 2365-2371/, պ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյան / Վահան Ա Սյունեցի կաթողիկոս հայոց, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2019, թիվ 2/29, էջ 38-54, դասախոս Ա. Գրիգորյան / Նորահայտ վիմագրեր Սոթքի տարածաշրջանից, Սեդրակ Բարխուդարյան-120 գիտական հոդվածների ժողովածու, 2019, էջ 56-64:		

		Սոթք-1 ամորցը և Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի սոթքյան հատվածը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, 2019, էջ 117-124/:		
2.1.3 Ակտիվացնել և խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտա-կան աշխատանքների կատարումը և ղեկավարումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում հետազոտական աշխատանքի նկատմամբ: : Ուսանողների կողմից իրականացվող հետազոտություն-ների ծավալի մեծացում և գիտահետազոտա-կան աշխատանքներում ուսանողների ներգրավվածու-թյուն:	Ֆակուլտետի որոշ ամբիոններ ուղղորդել և ղեկավարել են ուսանողներին՝ հետազոտական աշխատանք կատարելիս և օժանդակել նրանց՝ գիտաժողովների մասնակցելու համար: «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցել են “Write On! Competition 2020” էսսեների միջազգային մրցույթին, որը կազմակերպել էր ԱՄՆ խաղաղության կորպուսը, և մի քանի ուսանողներ զբաղեցրել են առաջին տեղեր: ԻՄ-ի ՈՒԳԸ-ի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի		

		ՈՒԳԸ-ի հետ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ համագործակցություն: 2019 թ. հոկտեմբերի 3-ին ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված ԵՊՀ-ի ՈՒԳԸ հրավիրած միջազգային 6-րդ գիտաժողովում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհիներ **Ղազարյան Աստղիկը** («Մազի խորհուրդ-սիմվոլը հայ ժողովրդական բանահյուսության մեջ») և **Ռոզա Մելքումյանը** («Գաբրիել Սունդուկյանի «Գիշիրվան սաբրը խեր է» վոդևիլի համեմատական վերլուծությունը») կարդացել են զեկուցումներ (**ղեկավար՝ Վ. Ավագյան**): Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր, որոշվել է զեկուցման նյութերը վերածել գիտական հոդվածների և տպագրել առանձին ժողովածուով:		

2.1.4 Բարելավել հետազոտական բաղադրի-չի իրականացումը բակալավրի կրթական ծրագրե-րում:	Բակալավրի կրթական ծրագրերում բարելավված հետազոտական բաղադրիչի առկայությունը:	Նշենք, որ ընթացիկ ուսումնական տարվա ավարտին ոչ միայն բարելավվել, այլև կանոնակարգվել է ուսումնական բաղադրիչի առկայությունը բակալավրի կրթական ծրագրերում, քանի որ պայմանավորված 2020 թ.-ի մարտի 12-ին ԵՊՀ գիտական խորհրդում բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման կարգի հաստատմամբ՝ Մասնաճյուղում ևս կոնկրետ քայլեր են ձեռնարկվել հետազոտական բաղադրիչը ներդնելու ուղղությամբ, որոնք ամրագրվել են ամբիոնների քննարկումներիր հիման վրա կայացրած որոշումներով:		Այս գործընթացը ենթակա է մշտադիտարկման, քանի որ հետազոտական բաղադրիչը տարբեր դասընթացներում կիրառվում է առաջին անգամ, և հարկավոր է հասկանալ՝ ճի՞շտ է որոշվել դասընթացը, թե ոչ, որո՞նք են ուժեղ և թույլ կողմերը և այլն:
2.2.2 Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանա-յին բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապե	Համատեղ իրականացված ծրագրեր:	Այս հարցում պետք է նշել տնօրենի և ԱԿ բաժնի օժանդակությունը: 2019 թվականի հոկտեմբերի 19-ին մասնաճյուղը համագործակցության հուշագիր է կնքել ,Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանե հիմնադրամի հետ՝ նպատակ		

տու-թյան առաջա-տար գիտաշխատողնե-րին:		ունենալով կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումը, համագործակցության ծրագրերի իրականացումը: 2019թ. հունիսին ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն 2019 թ. դեկտեմբերի 2-ին մասնաճյուղը համագործակցության պայմանագիր է կնքել ,Փրոջեքթ հարմոնի» հայկական մասնաճյուղի հետ, որի շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է ,Ամերիկյան գրադարան և դասընթացի կենտրոն»: Կենտրոնում փետրվարի 17-ից մեկնարկել է անգլերենի ուսուցման առաջին անվճար դասընթացը: Այս կենտրոնի առկայությունը մեծ կարևորություն ունի ուսանողների և աշխատակիցների անգլերեն լեզվի իմացությունը և խոսակցական ունակությունները զարգացնելու համար: Մասնաճյուղը շարունակում		

		է իր համագործակցությունը Խաղախության կորպուսի հետ, որի կամավորներն իրենց գործունեությամբ նպաստում են ուսանողների անգլերենի խոսակցական մակարդակի բարձրացմանը: Նշենք, որ կորոնավիրուսի համաճարակի պատճառով ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ մարտ ամսին կամավորը դադարեցրեց իր գործունեությունը մասնաճյուղում և վերադարձավ ԱՄՆ:		
2.2.3 Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկություններին համապատաս-խան և նրանց մասնակ-ցությամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	Տարածաշրջանի՝ հետազոտական և կրթական ծրագրերում ներգրավված ձեռնար-կություններ:	Այս առումով 2019-2020 ուստարվա ընթացքում որևէ էական քայլ չի կատարվել: 2019 թ.-ի մայիսի 16-ին ֆակուլտետում բացված հոգեբանական կենտրոնը գործել է մինչև 2019 թ.-ի ավարտը՝ իր ծառայությունն առաջարկելով հոգեբանական աջակցության նկարիք ունեցող անձանց: Մասնաճյուղում ստեղծվել է «Տավուշ» հետազոտական կենտրոն, որի հետազոտությունների շրջանակը, ըստ տարածաշրջանի կարիքների, որոշելու համար առաջարկ է արվել նաև		Շարունակական գործընթաց է:

		ֆակուլտետի ամբիոններին:		
2.3.1 Խրախուսել միջազգային գիտական շտեմա-րաններում ընդգրկված ամսա-գրերում մասնաճյուղի աշխատողների հրապա-ռա-կումները:	Միջազգային գիտական շտեմա-րաններում ընդգրկված ամսա-գրերում կատարված հրապարակումներ:	Ընթացիկ ուսումնական տարում ունենք նմանատիպ փոքրաթիվ հրապարակումներ:	Խրախուսման համար ֆինանսական միջոցները նախատեսվել են ԵՊՀ ԻՄ-ի 2019թ.-ի դեկտեմբերի 28-ի նիստում հաստատված ,Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգով:	
2.3.3 Կազմակերպել միջազ-գային գիտաժո-ղովներ, օժանդակ	Արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատակիցների	Օտար լեզուների ամբիոնի անգլ. լեզվի և գրակ. դասախոսները մասնակցել են 2019 թվականի սեպտեմբերին ԵՊՀ	Մասնաճյուղում չի կազմակերպվել միջազգային	Առայժմ այս ուղղությամբ որևէ բան չի ծրագրվում:

ել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:	թվի աճ:	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի և անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված ԵՊՀ հարուրամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:	գիտաժողով՝ ֆինանսական, կազմակերպչական, համաճարակային և այլ պատճառներով:	
2.3.4 Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:	Համատեղ ուսումնամեթոդական և գիտահետազոտական փոխգործակցության ամրապնդում և խորացում, հետազոտական աշխատանքների համատեղ իրականացում:	Ընթացիկ ուսումնական տարում, ցավոք, կորոնավիրուսի համաճարակի հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված, ուսանողների փոխանակության ծրագրի շրջանակներում մասնաճյուղի ուսանողների ամենամյա այցը Ֆրանսիայի հանրապետության Վալանս քաղաքի Մաեստրիս համալսարան տեղի չունեցավ, սակայն ծրագիրը շարունակական է: Շարունակական է նաև համագործակցությունը «Ֆրանս-հայկական ասոցացիայի» հետ, որի անդամները Հայաստան այցելության առաջին հնարավորության դեպքում կրթաթոշակներ են հանձնելու նախապես ընտրված ուսանողներին: Շարունակական է նաև		

		համագործակցությունը Ամերիկայի Խաղաղության կորպուսի հետ, որի կամավորները Մասնաճյուղում խոսակցական անգլերեն են դասավանդել ոչ միայն մասնագիտական բաժնի, այլև այլ բաժինների ուսանողների: Ընդ որում նշենք, որ դասաժամերը եղել են դասացուցակով կանոնակարգված, իսկ մասնագիտական բաժնի ուսանողները այդ դասընթացից ստացել են քննական միավոր: Կարծում ենք, որ աշխարհում ստեղծված արտակարգ իրավիճակի կարգավորումից հետո համագործակցությունը կշարունակվի: ՀՀ Գիտության կոմիտեի գիտական թեմաների հայտերի փորձաքննության մրցույթին ներկայացված «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի (թեմայի ղեկավար Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Վաչագան Ավագյան) հետազոտական խմբում ընդգրկված է Վարշավայի համալսարանի պրոֆեսոր **Մարիա Կալինովսկան**: Առկա է նրա՝ փոխադարձ համագործակցությունը հաստատող պաշտոնական		

		նամակը: Հետազոտական խմբի ոչ պաշտոնական գործընկերն է Դելիի համալսարանի դասախոս, դոկտոր **Մադհու Գրովերը**: Գիտական թեման ուսումնասիրվելու է երեք տարվա ընթացքում: Ծրագրվում է ուսումնասիրության ավարտին կազմակերպել միջազգային գիտաժողով:		
3.2.2 Մշակել լրացուցիչ կրթության հայե-ցակարգ՝ ԵՊՀ-ում գործող ծրագրերը օգտագործելու և մասնաճյուղի համար մրցունակ ծրագրեր պատրաստելու ուղղությամբ:	Մրցունակ ծրագրերի առկայություն՝ ըստ արդի կարիքների:	Այս ուղղությամբ ընթացիկ ուսումնական տարում որևէ բան չի ձեռնարկվել:		Շարունակական գործընթաց է:
3.2.3 Մշակել տարածաշրջանի հանրային պահանջարկին համա-պատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնել	Տարածաշրջանի հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթական նոր ծրագրեր:	Ամբիոններում պրակտիկաների (մանկավարժական, ուսումնական, արտադրական) ղեկավարների կողմից մշակվել են ծրագրեր, որոնք իրականացնելու համար ԱԿ և ՄԿՊԿ բաժնի կողմից կնքվել են		

ով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:		համագործակցային պայմանագրեր դպրոցների և տարբեր կազմակերպությունների հետ՝ լրացուցիչ ծառայություններ տրամադրելու և համագործակցելու համար:		
4.3.1 Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը:	Տարբերակված հավելավճար՝ ըստ դասախոսական տարակարգերի: Տարբերակված հավելավճարի չափանիշների ճշգրտում և հաշվեկշռի ավելացում:	Ընթացիկ ուսումնական տարվա մեջ դասախոսները չեն ունեցել տարբերակված հավելավճար, քանի որ չկան ճշգրտված չափանիշներ:		Կայուն ֆինանսական հաշվեկշիռ ունենալու պարագայում կարելի է առաջարկներ ներկայացնել Մասնաճյուղի գիտխորհրդին՝ տարբերակված հավելավճարի մեխանիզմ ձևավորելու վերաբերյալ:
4.3.2 Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:	Տարբերակված չափանիշների առկայություն և գիտխորհրդի կողմից հաստատված կարգ:	Այս ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:		Կայուն ֆինանսական հաշվեկշիռ ունենալու պարագայում կարելի է առաջարկներ ներկայացնել Մասնաճյուղի գիտխորհրդին՝ տարբերակված հավելավճարի մեխանիզմ ձևավորելու վերաբերյալ:
4.3.3 Բարձրացնել աշխատողների	Աշխատավարձի և գնաճի տեմպերի բալանսի	Ընթացիկ տարում մի փոքր բարձրացվել է աշխատողների		

հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:	պահպանում:	աշխատավարձը՝ Մասնաճյուղի բյուջեի հնարավորության սահմաններում:		
4.3.4 Ներդնել սոցիալական աջակցության ծրագրեր:	Սոցիալական ծրագրերի հաստատված ցանկ և բյուջեի համապատասխան հոդված՝ աշխատակիցներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:	Աշխատակիցներին աջակցություն ցուցաբերելու համար ֆակուլտետում համապատասխան տվյալներ են հավաքագրվում, սակայն սոցիալական աջակցության ծրագրեր մշակված չեն:		Պլանավորվում է զբաղվել հաջորդ ուսումնական տարում:
4.3.5 Զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի կետերի պայմանները, ապահովել ԵՊՀ հանգստի և մարզաառողջարանային բազաներ	Բարելավված ենթակառուցվածքների առկայություն:	Ֆակուլտետում կան տարածքի տնտեսական որոշ խնդիրներ (վերանորոգման ենթակա ֆրանսերենի սեկցիա, ջեռուցման հարցեր դեկանատում և հայոց լեզվի և գրականության ամբիոնում): Հուսով ենք, որ Մասնաճյուղի ղեկավարությունը առաջիկա վերանորոգման ծրագրում հնարավորինս		

ի մատչե-լիությունը մասնաճյուղի բոլոր աշ-խատողների և սովորողների համար:		լուծում կտա նշված հարցերին: Մասնաճյուղը հասարակական սննդի իր սեփական կետերը չունի: Ուսանողներն ու աշխատակիցներն օգտվում են կից գտնվող երկու կետերից: Մասնաճյուղի աշխատակիցները Արիմիության միջոցով հնարավորություն ունեն մատչելի հիմունքներով օգտվելու ԵՊՀ մարզաառողջարանային բազաներից:		
5.1.1 Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ տեխնոլոգիապես վերազինել առկա լսարան-ներն ու ուսումնական լաբորա-տորիա-ները, ձևավորել նորերը:	Տեխնոլոգիապես վերազինված ուսումնական տարածքների առկայություն:	Ֆակուլտետն ունի 6 լսարաններ, անգլերեն լեզվի ուսուցման ռեսուրս կենտրոն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուների կաբինետներ, որոնք տեխնոլոգիապես վերազինված են: Ցանկալի կլիներ բանասերների թեում ևս ունենալ տեխնիկապես վերազինված լսարան՝ ելնելով կրթական ծրագրի նորագույն պահանջներից:		
6.1.2 Զարգացնել ուսանողներին մատուցվող	Ուսանողներին մատուցվող խորհրդատվական	Ֆակուլտետի ամբիոններից յուրաքանչյուրում ուսումնական տարվա I և		

ղ խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծա-ռայություններ:	և լրացուցիչ կրթական բարելավված ծառայություններ:	II կիսամյակների համար կազմվել են խորհրդատվության գրաֆիկներ՝ ըստ առանձին դասընթացների և դրանք վարող դասախոսների, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարման համար, որոնց մասին ուսանողներն իրազեկվել են: Ինչ վերաբերում է լրացուցիչ կրթական ծառայություններին, 2019-2020 ուստարվա ընթացքում՝ մինչև մարտին արտակարգ դրության հայտարարումը, օտար լեզվի առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողները դասացուցակով կանոնավոր դասընթացներ էին ունենում Խաղաղության կորպուսի կամավորի հետ՝ խոսակցական անգլերենը բարելավելու նպատակով: Նույն նպատակին է ծառայում նաև 2020թ. փետրվարի 20-ին ԱՄՆ		

		դեսպանանատան աջակցությամբ և ֆինանսավորմամբ Մասնաճյուղում բացված «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնը»:		
6.1.4Բազմազանեց-նել մարզամշակու-թային ծրա-գրերը, զար-գացնել ուսանողական ակում-բային համակարգը՝ շեշ-տադրելով ինտե-լեկտուալ, բնապահ-պանական, երկրա-գիտական և հայրենաճանաչո-ղական բնույթի միջո-	Ուսանողական ակումբների արդյունավետ գործունեություն, բազմազան մարզամշակութա-յին ծրագրեր, ուսանողական առօրյայի աշխուժացում:	Ընթացիկ տարում ֆակուլտետում տարբեր ամբիոնների կողմից կազմակերպվել են ինտելեկտուալ, հայրենաճանաչողական, գրական-գեղարվեստական բնույթի միջոցառումներ: ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում դոցենտ, բ. գ. թ. **Ալիսա Հասանյանը** ուսանողների հետ կազմակերպել է բազմաբնույթ միջոցառումներ, գրական բանավեճեր, գրքի շնորհանդեսներ ու քննարկումներ, հաճախ հանդես եկել զեկուցումներով: Ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Աիդա Սարհատյանը** ուսանողներին հանձնարարել է հետազոտական և ստեղծագործական տարաբնույթ ինքնուրույն աշխատանքներ՝		

ցառում- ները:		մասնագիտական ուղղվածությամբ ռեֆերատներ, էսսեներ, վերլուծական և նկարագրական բնույթի շարադրանքներ, գործնական գրություններ, թեմատիկ մշակումներ մասնագիտական գրականությունից, հայ դասական գրականության լավագույն նմուշների լեզվառճական բնույթի վերլուծություններ: Դաս-միջոցառումներ է ունեցել՝ նվիրված մեծանուն մարդկանց հոբելյաններին, կարևոր պատմական իրադարձություններին: ՏՄՄ 3-րդ և 4-րդ կուրսում Ուսուցչի օրվա առթիվ անցկացրել է զրույց-միջոցառում. «Վաղը ես ուսուցիչ եմ լինելու…» թեմայով: ՏՄՄ 3-րդ և 4-րդ կուրսերում հանձնարարել է զեկուցումներ՝ ‹‹Մեծ մանկավարժների դասերը››՝ համապատասխան մասնագիտական գրականությամբ, և նույն կուրսերում ունեցել գործնականի ժամեր՝ ‹‹Դասը վարում են ուսանողները›› թեմայով:		

		Դեկտեմբերի 12-ին ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Ա. Սարհատյանի** նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ԵՊՀ ԻՄ-ի դահլիճում ներկայացվել է ուսանողական գրական-գեղարվեստական-երաժշտական միջոցառում՝ «Հայ քնարերգության երաժշտական գույները» խորագրով: Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում նույն միջոցառումը դեկտեմբերի 19-ին ներկայացվել է Իջևանի թիվ 4 դպրոցում՝ արժանանալով թե՛ աշակերտության, թե՛ ուսուցչական կազմի ջերմ ու բարձր գնահատանքին: Ամբիոնի դասախոսներ **Ա. Սարհատյանն** ու **Ա. Հասանյանը** մասնակցել են Օտար լեզուների ամբիոնի կազմակերպած «Հայ-ֆրանսիական առնչություններ» խորագրով միջոցառմանը, իսկ **Կ. Պողոսյանն** ու **Վ. Աղաբաբյանը**՝ Եվրոպական լեզուների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը: Դեկտեմբերի 20-ին		

		մասնաճյուղի գրադարանում կայացել է Վարդգես Ահարոնյանի «Լևոն Շանթ. Մարդը և գործիչը», «Անդրանիկ. Մարդը և ռազմիկը», «Յովհաննէս Թումանեան. Մարդը և բանաստեղծը» գրքերի շնորհանդեսը, որտեղ զեկուցմամբ հանդես է եկել ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Ա. Հասանյանը**: «Օտար լեզուներ » մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, այդ թվում ՝ “Ուսուցչի տոն”, “Անգլերենը որպես միջազգային լեզու” խաղ – դատավարություն, «Ամանորյա միջոցառում», «Իմ սիրելի գրողը» (առցանց), իրականացվել են մի շարք բաց դասեր և այլն:		
6.1.6 Խթանել ուսանողների կարիերայի ծառա-	Լրացուցիչ պրակտիկայի արդյունավետ համակարգ:	Այս ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել:		

յություն-ները՝ զարգացն ելով լրացուցիչ պրակ-տիկայի (ինտերն-շիփ), խորհրդա-տվության և ուսուցո-ղական դասընթացների համա-կարգը:				
6.1.7 Նպաստել ուսանողն երի ձեռներե-ցության հմտությու ններ զարգացմ անն ուղղված ծառայու-թյունների կայաց-մանը:	Ուսանողն երի ձեռներե-ցության հմտությու ններ զարգացմ անն ուղղված ծառայությ ուն-ների տրամադր ում:	2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում պայմանավորվածություն էր ձեռք բերվել Տավուշի մարզպետարանի աշխատակիցների հետ, որոնք պիտի վարեին ժամանակակից պրակտիկ լրագրության և տուրիզմի վերաբերյալ դասընթացներ, և տարբեր մասնագիտություններից հավաքագրվել էին դրանցով հետաքրքրված բավական թվով ուսանողներ, սակայն ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ դասընթացները չկայացան:		Իրականացնել 2020-2021 ուստարվա ընթացքում:

6.1.10 Ապահովել շրջանա-վարտների հետ մասնաճյուղի և առանձին ֆակուլ-տետների շարունա-կական կապը և խթանել շրջանա-վարտների կողմից Մասնաճյուղին տարա-բնույթ աջակ-ցության նախաձեռնու-թյունները:	Ֆակուլտետի աշխատակազմի համալրումը նոր կադրերով, շրջանավարտների կողմից աջակցություն ունենալը:	Ֆակուլտետը մշտապես պահում է կապը իր շրջանավարտների հետ: Ֆակուլտետի շատ շրջանավարտներ համալրել են մեր աշխատակիցների շարքերը:		Շարունակական գործընթաց է:
6.2.2 Կազմակերպել ուսանողական կազմակերպություն-յունների ինստի-	Ուսանողների համար առաջնոր-դության դասընթացների համակարգ:	ՈւԽ-ն պարբերաբար նախաձեռնում է առաջնորդությունը խթանող միջոցառումներ, որոնց ֆակուլտետը մշտապես պատրաստ է աջակցելու:		

տու-ցիոնալ զարգաց-մանը նպաստող և ուսանողն երի առաջնոր-դությանն աջակցող ուսուցո-ղական դաս-ընթացներ:				
6.2.3 Խթանել մասնաճյո ւղի ուսա-նողական կազմակե րպու-թյունների ներհանր ապետա-կան և միջազ-գային համագոր ծակցու-թյունը:	Համատեղ իրականա ցվող ծրագրեր:	ՈւԽ-ը և ՈւԳԸ-ը բավական անկախ և ինքնաբավ կառույցներ են, սակայն հարկ եղած դեպքում ֆակուլտետը միշտ պատրաստ է օժանդակելու նրանց նախաձեռնած խելամիտ ծրագրերին:		
6.2.4 Նպաստել ուսանող-ների հե-	Ուսանողն երին ներգրավե լ հետազոտ ական	ՈԻԳԸ նախաձեռնություններում ուսանողների մասնակցությանը		

տա-զոտական աշխա-տանք-ները խթանող ՈՒԳԸ ծրագրերի արդ-յունավետ ության բարձրաց-մանը:	աշխատանքներում: Ուսանողների ակտիվ մասնակ-ցություն ՈՒԳԸ ծրագրերին:	մշտապես օժանդակել են ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները: Ինչպես արդեն իսկ նշել ենք, 2019 թ. հոկտեմբերի 3-ին ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված ԵՊՀ-ի ՈՒԳԸ հրավիրած միջազգային 6-րդ գիտաժողովում մեր ֆակուլտետի «Հայոց լեզուն գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Աստղիկ Ղազարյանը և Ռոզա Մելքումյանը զեկուցումներ են կարդացել և ստացել հավաստագրեր:		
7.1.2 Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար մասնաճյուղի կայքէջը:	Մշտապես թարմացվող տեղեկատվական համակարգ բակալավրիատի դիմորդների համար:	Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում ընթացիկ տարում կատարված աշխատանքները մանրամասնորեն լուսաբանվել են ԵՊՀ կայքէջում: Նշենք, որ 2019-2020 ուստարվա ընթացքում՝ մինչև արտակարգ դրության հաստատումը, Մասնաճյուղի դասախոսների կողմից դասախոսություններ են կարդացվել մարզի 22 դպրոցներում՝հատկապես		

		Նոյեմբերյանի և Շամշադինի տարածաշրջաններում:		
7.1.3 ԵՊՀ-ի հետ համատեղ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրա-կրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներ անցկացնել մասնաճյուղում՝ 2 փուլով՝ ընդ-լայնելով մասնա-կիցների	Դիմորդների շրջանում Մասնաճյուղի հանդեպ մեծացնել հատաքրքրու-թյունը:	2020 թ.-ի մարտի 28-ին ԵՊՀ ԻՄ-ում պիտի կայանար հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի կողմից կազմակերպված դպրոցական օլիմպիադայի I փուլը՝ Տավուշի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար, սակայն արտակարգ դրության հայտարարման, ապա դրա երկարաձգման պատճառով այն տեղի չունեցավ:		Ամենամյա գործընթաց է, որին մշտապես մասնակցում են ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսներ:

շրջանակը:				
7.1.4 Ավագ դպրոցների և քոլեջների համար կազմակերպել «բաց դռների օր» և ճանաչողական այց մասնաճյուղ:	Մասնաճյուղի և նրա կողմից իրականացվող կրթության վերա-բերյալ իրազեկու-թյան մակարդակի բարձրացում դիմորդների շրջանում:	ՄԿՊԿ բաժինը, ֆակուլտետի հետ համագործակցելով, ուսումնական տարվա II կիսամյակում կազմակերպում է «բաց դռների օր» և ճանաչողական այցեր մասնաճյուղ, որի ընթացքում ավագ դպրոցի և վարժարանի սաները ծանոթանում են ֆակուլտետի կառուցվածքին, հնարավորություններին, մասնագիտություններին, իրենց ցանկությամբ ունկնդիր են լինում տարբեր դասախոսու-թյունների: Ընթացիկ ուստարում դա հնարավոր չեղավ կազմակերպել՝ արտակարգ դրության պատճառով:		Շարունակական գործընթաց է:
7.1.5 Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջա-նում՝ հիմնելով	Ընդունելության ցուցանիշների աճ:	Ինչպես նախորդ տարում, այնպես էլ ընթացիկ 2019-2020 ուստարվա ընթացքում այս առումով բավական մեծ աշխատանք է կատարվել՝ շնորհիվ ՄԿՊԿ բաժնի կազմակերպած գործունեության և այս խնդրի իրականացման գործում ֆակուլտետի հետ համագործակցության: Մասնաճյուղի և գործող		Շարունակական գործընթաց է:

դի-մորդների հետ տարվող աշխա-տանքների ներկա-յացուցչու թյուններ և դրանք ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:		մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը տարածվել է ինչպես ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, այնպես էլ տպագրված բուկլետների միջոցով: Ընդունելության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ աճել են:		
7.1.6 Ընդլայնել ԵՊՀ ԻՄ –ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների և քոլեջների շըր-ջանակը:	Բուհ-դպրոց շարունակական փոխհարաբե-ության ստեղծում:	Վերջին երկու տարիներին Մասնաճյուղը պայմանագրեր ուներ թիվ 1հիմնական դպրոցի, Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի ավագ դպրոցների հետ (անժամկետ), ինչպես նաև Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ –ի հետ (անժամկետ): Նախորդ ուստարվա ընթացքում կնքվել են պայմանագրեր թիվ 1և թիվ 5 հիմնական դպրոցների հետ՝ մանկավարժական պրակտիկաները		

		կազմակերպելու համար: Այս ուսումնական տարվա ընթացքում ևս մեր ուսանողները մանկավարժական պրակտիկաները (առկա և հեռակա ուսուցման համակարգերում) անցկացրել են նշված դպրոցներում, ընդ որում արտակարգ իրավիճակի պայմաններում այդ պրակտիկաները շարունակվել են առցանց եղանակով:		
7.1.7 ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ–ի դասախոս-ներին առավելա-գույնս ներգրավել հանրակը ր-թական ուսումնա-կան հաստատ ու-թյուններում ակնարկա յին և բովանդա կային	Մասնագի տական կողմնորո շման հարցում աշակերտ ին օժանդակո ւթյուն և հետաքրքր ության ձևավորու մ բուհի նկատմամ Բ:	Ինչպես արդեն վերը նշել ենք, ֆակուլտետի տարբեր ամբիոնների դասախոսներ մասնագիտական կողմնորոշման համար այցելել են մարզի դպրոցներ, զրույցներ ունեցել 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների հետ, ներկայացրել Մասնաճյուղը, նրա հնարավորությունները, տեխնոլոգիական և մասնագիտական ռեսուրսները և առաջարկվող մասնագիտությունները: Տարածաշրջանի 22 դպրոցներում կարդացվել են նաև նախապես պլանավորված թեմաներով դասախոսություններ:		

դասախոս ու-թյունների, թեմա-տիկ քննարկում-ների կազմակերպ-ման գործում:				
7.2.1Օպտիմալաց-նել ընդունելու-թյան ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրա-գրերի՝ ուղենիշ ունենալով արտա-քին և ներքին միջավայրերի վերլուծությունը:	Ընդունելության ամենամյա պլանավորում՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի:	Ուսուցման օպտիմալ պլանավորումից ելնելով՝ ընթացիկ՝ 2019-2020 ուստարվա ընդունելության համար վերաբացվեց «Հոգեբանություն» կրթական ծրագիրը և ներդրվեց նոր՝ «Մանկավարժություն» կրթամասի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը: Ճիշտ է, առաջին տարում նշված մասնագիտությունների համար ունենք փոքրաթիվ ուսանողներով խմբեր, սակայն հաջորդ տարիներին ՄԿՊԿ բաժնի հետ նախապես ծրագրվող աշխատանքի արդյունքում ակնկալում ենք ուսանողների թվի ավելացում: Վերլուծելով արտաքին և ներքին միջավայրերը ընդունելության ամենամյա պլանավորում կատարելու		

		համար՝ Մասնաճյուղի գիտխորհրդում որոշում է ընդունվել մանկավարժի որակավորում շնորհելու համար 2020-2021 ուստարում «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով բացել մագիստրատուրա՝ հայտագրելով 25 տեղ՝ հեռակա ուսուցմամբ:		
8.1.3 Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ ԻՄ-ի վճարովի ծառայությունները:	Վճարովի ծառայություններից ֆինանսական հոսքերի աճ:	Վճարովի ծառայություններ կարելի է կազմակերպել ֆակուլտետի հոգեբանական կենտրոնում, քանի որ Իջևանում այդպիսի ծառայություններ առաջարկող կենտրոն չի գործում:		Հաջորդ ուստարվա ընթացքում աշխատել կենտրոնը վերագործարկելու ուղղությամբ:
8.1.4 Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակա-կան կապը՝ խրա-խուսելով	Շրջանավարտներից և այլ շահառուներից ստացվող աջակ-ցություններ:	Շրջանավարտների և այլ շահառուների հետ ֆակուլտետի շարունակական կապն ապահովվում է հիմնականում ԱԿ բաժնի գործունեությամբ և միջնորդությամբ, որի շնորհիվ բարձր առաջադիմությամբ կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող ուսանողներ կրթաթոշակներ են		Շարունակական գործընթաց է:

նրանց կողմից բուհին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնություն-ները:		ստանում:		
8.1.5 Ուսումնասիրել մասնաճյուղի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:	Ուսանողների գործնական հմտությունների դրսևորումը, ֆինանսական որոշակի մուտքերի ապահովում:	Այս ուղղությամբ ընթացիկ ուստարում քայլեր չեն ձեռնարկվել, սակայն ուսումնական գործընթացը սովորական հունով ընթանալու պարագայում կարելի է ամբիոններում ուսումնասիրել և քննարկել կրթական ծրագրերի ընձեռած հնարավորությունները՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ ֆակուլտետների հետ՝ բիզնես պլան մշակելու և իրականացնելու համար:		Քայլեր ձեռնարկել հաջորդ ուստարվա ընթացքում:
8.3.4Կատարելագործել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը:	Ներքին աուդիտի գործող համակարգ:	Ինչ վերաբերում է ֆակուլտետի ներքին աուդիտին, ապա դա կատարվում է ըստ մասնաճյուղում գործող կարգերի՝ կիսամյակի կամ ուստարվա ավարտին ֆակուլտետի տարբեր կառույցների ղեկավարների կողմից տրվող հաշվետվություններով՝		Շարունակական գործընթաց է:

		իրենց ծրագրի, գործունեության և արդյունքների մասին:		
8.3.6 Բարձրացնել սովորողների ներ-գրավված ության արդյունավետու-թյունը մասնաճյուղի կառավարման գործընթացներում:	Կառավարման մեջ ներգրավված վերապատրաստ-ված սովորողների առկայություն:	Մասնաճյուղի կառավարմանն ուսանողներին ծանոթացնելու և ներգրավելու նպատակով վերջին տարիներին կազմակերպվում է ուսանողական ռեկտորատ: 2019թ. դեկտեմբերի 11-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական խորհրդի և տնօրենության համագործակցությամբ, ուսանողի տոնի առթիվ տեղի ունեցավ ուսանողական ռեկտորատ, որը հաջորդեց նոյեմբերի 29-ին կայացած պիլոտային ռեկտորատին: Ռեկտորատի ընթացքում համալսարանը ղեկավարեցին ուսանողները, որոնք հնարավորություն ունեցան ծանոթանալու համալսարանի կառուցվածքին և բուհի խնդիրներին՝ այլ դիտանկյունից: Օրվա ընթացքում պաշտոնավարող		

		ուսանողներն իրենց պարտականությունների շրջանակներում իրականացրին դասապրոցեսի կազմակերպում, մասնաճյուղի ներքին կարգապահության պահպանում, դասախոսությունների վարում, դասալսումների կազմակերպում, նիստերի ու խորհրդակցությունների հրավիրում:		
8.4.3 Բարձրացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության	Ունենենալ գնահատման թափանցիկ գործընթաց, գնահատման համակարգի և չափանիշների վերաբերյալ իրազեկված ուսանողներ:	2019-2020 ուսումնական տարվա I կիսամյակում գրավոր ընթացիկ ստուգումներն ու քննությունները անցկացվել են տեսահսկվող լսարաններում, որպեսզի հնարավորինս ապահովվի ակադեմիական ազնվությունը: II կիսամյակում, արտակարգ իրավիճակով պայմանավորված, չեղարկվեցին լսարանային գրավոր քննությունները, և ուսանողները հանձնեցին միայն տարեվերջյան քննություններ՝ առցանց եղանակով: Մինչև քննությունների մեկնարկը		

մակարդակը:		ամբիոններում քննարկվեցին քննության անցկացման ձևերը և միավորների բաշխման կարգը, որի վերաբերյալ ուսանողները նախապես տեղեկացվեցին: Նշենք նաև, որ եզրափակիչ գնահատականի մեջ ներառվել են նաև նախապես տրված հանձնարարականներով, սեմինարների պատասխաններով, գրավորների արդյունքներով ձևավորված միավորները, որոնց մասին ուսանողները նախապես տեղեկացվել են:		
9.2.1 Ներդնել թիրախային օտարալեզու ուսումնական մոդուլներ և ծրագրեր:	Կրթական ծրագրերում օտարալեզու մոդուլների առկայություն:	Այս ուղղությամբ դեռևս որևէ քայլ չի կատարվել:		Ենթադրում է ամբիոններում լուրջ քննարկում, ռեսուրսների և իրականացման հնարավորությունների գնահատում:
9.2.3 Օգտագործել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություն-ների հետ ԵՊՀ-ի կապերը՝ համատեղ ծրագրեր իրականա	Համատեղ կատարվող ծրագրերի առկայություն	Ինչպես արդեն ասել ենք, ֆակուլտետը համագործակցում է Ֆրանսիայի Վալանս քաղաքի «Մաեստրիս» համալսարանի հետ: Այս ուսումնական տարվա գարնանը ևս մեր ուսանողները պիտի երեք շաբաթ տևողությամբ այց ունենային նշված ուսումնական հաստատություն և		Համագործակցությունը շարունակական է:

ցնելու համար:		մասնակցեին դասերին, սակայն համավարակի պատճառով այցը չեղարկվեց:		
9.2.5 Կրթական ծրագրերի վերակառուցում՝ շարժունությունն ապահովելու նպատակով:	Վերակառուցված կրթական ծրագրեր:	Որակի ապահովման բաժնից չունենք բենչմարքինգի տվյալներ: Հետաքրքիր առաջարկների դեպքում կարելի է լավագույն փորձին հետևելով՝ վերակառուցել կրթական ծրագրերը:		